# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1321-Ա

### «ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2023Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 01.11.2023թ. թիվ 6031 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածի սննդի գնման արդյունքում խնայված գումարներից պակասեցնել 50.8 հազար դրամ և 13.9 հազար դրամ ավելացնել «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին, 36,9 հազար դրամ ավելացնել «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածին էլեկտրական կշեռք հարթակով և ծեռքի էլեկտրական ջրանոց ծեռք բերելու համար:

2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբերի 1
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1322-Ա

### ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ,ՀԱՄԱՍՓՅՈՒՌ ԿԱՌԼԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ,ՌԱՖԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ,ԿԱՐԻՆԵ ԱՐՏԱՇԵՍԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՀԱՐ ԱՐՏԱՇԵՍԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արտաշես Գրիգորի Շահվերդյանի 20.10.2023թ. թիվ 5839 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արտաշես Գրիգորի Շահվերդյանին,Համասփյուռ Կառլենի Սիմոնյանին,Ռաֆիկ Արտաշեսի Շահվերդյանին,Կարինե Արտաշեսի Շահվերդյանին և Գոհար Արտաշեսի Շահվերդյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Նորավան գյուղ 04-076-022-002 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Նորավան 5-րդ փողոց 29:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 01
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1323-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Մ.ԳՈՐԿՈՒ 60 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԺԻԿ ԺՈՐԱՅԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 04-001-0270-0012 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության · հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում, 12 հոկտեմբերի 2023 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Սերժիկ Ժորայի Մարգարյանի 25.10.2023 թվականի թիվ 5914 դիմումը՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Սերժիկ Ժորայի Մարգարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու 60 հասցեում գտնվող 600.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 35.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել Սերժիկ Ժորայի Մարգարյանին ՝ սեփականության իրավունքով:

1.Վերականգնել Սերժիկ Ժորայի Մարգարյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու 60 հասցեում գտնվող՝ 635.0 քմ օրինական հողամասի վրա 1960թ. կառուցված 63.2 քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 28.7 քմ մակերեսով ծածկի, 1970 թ. կառուցված 7.1 քմ մակերեսով լողարանի նկատմամբ,իսկ շան բները համարել ինքնակամ:

2. Սերժիկ Ժորայի Մարգարյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու 60 հասցեում գտնվող 635.0քմ մակերեսով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը՝ 57.8 քմ արտաքին և 52.0 քմ ներքին մակերեսով, խորդանոցը՝ 11.3 քմ արտաքին և 9.6 քմ ներքին մակերեսով, խորդանոցը՝ 6.6 քմ արտաքին և 5.5 քմ ներքին մակերեսով և պարիսպը՝ 2.5 քմ մակերեսով ճանաչել օրինական:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 78.2 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1422.0 ՀՀ դրամ ընդհանուր 111200 (մեկ հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ օրինկանացման վճար:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու 60 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023QVKXGJ:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 01
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2023 թվականի N 1324-Ա

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 01-ի թիվ 6035 եզրակացությունը, ընդառաջելով Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 99 տան բնակչուհի Ալվարդ Գուրգենի Կարապետյանի, Հ Ավետիսյան փողոցի 173 տան բնակչուհի Ալիսա Համբարձումի Թաթարյանի, Սայաթ-Նովա 7-րդ նրբանցք 28 տան բնակուհի Ալմարա Սուրենի Արղամանյանի, Սայաթ-Նովա փողոցի 2ա շենքի 35 բնակարանի բնակչուհի Սեդա Մագմանովի Վարդանյանի օգնության դիմումները.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 10.0 հազար դրամ օգնություն հատկացնել՝ Ալվարդ Գուրգենի Կարապետյանին, 20.0 հազար դրամ՝ Ալիսա Համբարձումի Թաթարյանին, 30.0 հազարական դրամ՝ Ալմարա Սուրենի Արղամանյանին, Սեդա Մագմանովի Վարդանյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ նոյեմբերի 02
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1325-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Նարեկ Գևորգյանի 29.08.2023թ. թիվ 4928 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 16-րդ փողոց 3 հասցեում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24022022-04-0031 վկայական) զբաղեցրած տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 16-րդ փողոց 3/1 հասցեում գտնվող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18102023-04-0067 վկայական) փաստացի մակերեսը կազմում է 203.9 քմ մակերես, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 16-րդ փողոց 3 հասցեին կից 16-րդ փողոց 3/1 հասցեում գտնվող 203.9 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային գնի չափով 1քմ-ը 1221 ՀՀ դրամ արժեքով՝ ընդամենը 248962 /երկու հարյուր քառասունութ հազար ինը հարյուր վաթսուներկու / ՀՀ դրամով օտարել (վաճառել) Նարեկ Գևորգյանին:

3.Ընդհանուր գույքին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ 16-րդ փողոց 3 :

4.Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքին պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 02
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1326-Ա

### ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՄԼԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Արմավիր համայնքի գլխավոր հատակագծով՝ Սվետլանա Համլետի Պողոսյանի լիազորված անձ Գոռ Սամվելի Մանուկյանի 16.10.2023թ. թիվ 5741 դիմումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Սվետլանա Համլետի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 110 թաղամաս 347 հասցեում գտնվող 400.0 քմ մակերեսով հողամասից 24.0 քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1327-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և Ռուբիկ Խաչատրյանի 18.10.2023 թ. թիվ 5762 դիմումը`

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ռուբիկ Խաչատրյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0088-0020 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք,գյուղ Սարդարապատ, 15-րդ փողոց,1-ին նրբանցք,14 :

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1328-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ԱՐԱՄՅԱՆԻՆ, ԳՅՈՒԼԻԶԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՄՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և Աղասի Արամյանի 30.10.2023 թ. թիվ 5986 դիմումը `

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Աղասի Արամյանին, Գյուլիզար Պետրոսյանին, Քրիստինե Արամյանին և Հարություն Արամյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող (սեփականության վկայական 0235737) գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, 32-րդ փողոց, 45:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ `** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1329-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը,ըստ 17.10.2023թ ժառանգության վկայագրի և Գնել Ավագյանի 25.10.2023 թ. թիվ 5913 դիմումը `

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գնել Ավագյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղում գտնվող 04-049-0012-0026 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Խանջյան, 5-րդ փողոց, 27/2:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1330-Ա

## ԼԻԴԱ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Լիդա Արշալույսի Մուրադյանի 04.09.2023.թ թիվ 5015 դիմումը:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Լիդա Արշալույսի Մուրադյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք 04-001-0220-0042 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք, Մ.Գորկու փողոց 5-րդ նրբանցք 23/3:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը
կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1331-Ա

### ԴԱՎԻԹ ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Դավիթ Ռուբենի Վարդանյանի 06.10.2023 թ. թիվ 5607 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Դավիթ Ռուբենի Վարդանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող /սեփականության վկայական 05092023-04-0069 / գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Ա.Ջիվանու փողոց 19 շենք 56/1:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1332-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ, 49-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11 և 13-րդ կետերի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126 -Ա որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Հովհաննես Աբրահամի Հարությունյանի 27.09.2023 թվականի թիվ 5453 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության 028696 վկայական) Հովհաննես Աբրահամի Հարությունյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց թիվ 4/1 հասցեում 130.0 քմ մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված խանութի՝ 130.0 քմ արտաքին մակերեսով և 110.0 քմ ներքին մակերեսով ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի<<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ընդհանուր արտաքին 130.0 քմ մակերեսով ինքնակամ հասարակական շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 3346 ՀՀ դրամ ընդհանուր 434980 (չորս հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր ութսուն ) ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց թիվ 4/1 հասցեում գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023XCQ3AN:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 03
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1333-Ա

### 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի $48^1$-րդ, 60-րդ, 76-րդ և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 31-ի թիվ 031-Ա որոշումը, Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1180-Ա որոշումը, Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթային հանձնաժողովի 03.11.2023թ. թիվ 7/1 արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.ՀՄ-02-23 ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված Մխիթար Ստյոպայի Արիստակեսյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 26/3 հասցեում գտնվող՝ 04-001-0050-0098 ծածկագրով, 41.0 քմ ընդհանուր մակերեսով, կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ ժամանակավոր շինություն /տաղավար/ տեղադրելու համար՝ առևտրային գործունեություն իրականացնելու նպատակով, 15 տարի ժամկետով:

2.Կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 1 քմ հողամասի համար 12600 ՀՀ դրամ, ընդհանուր մակերեսի համար տարեկան կառուցապատման իրավունքի վճարը կազմում է 516 600 /հինգ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

3.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնին՝ մրցույթի հաղթող Մխիթար Ստյոպայի Արիստակեսյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:

3.1Սահմանել որ, յուրաքանչյուր հինգ տարին մեկ կառուցապատման վճարը ենթակա է վերանայման՝ գործող վարձավճարի 30 %-ի չափով:

4.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից վճարման ենթակա գումարի վճարումը համայնքապետարանի համապատասխան հաշվարկային հաշվին:

5.Ընդունել ի գիտություն, որ.

5.1.Մրցույթում հաղթողը իր միջոցներն է ներդնելու նախագծով հաստատված կառույցների և ինժեներական հաղորդագծերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարական մոնտաժային աշխատանքների կատարումն ապահովելու համար:

5.2.Հողամասի կառուցապատման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

6.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ նոյեմբերի 6
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1334-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 081-Ա որոշումը, Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1179-Ա որոշումը, 2023 թվականի նոյեմբերի 06-ի ՀԱ-08-23 ծածկագրով հողամասն աճուրդով վաճառելու մասին թիվ 8-1 և աճուրդի արդյունքների մասին թիվ 8-2 արձանագրությունները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող, 04-066-0195-0056 ծածկագրով, 0,2865 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, գյուղմթերք արտադրելու նպատակով, օտարել 2023 թվականի նոյեմբերի 06-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթող Մարատ Ռոմիկի Հարությունյանին:

2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդային վաճառքի հաղթող Մարատ Ռոմիկի Հարությունյանի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջին կարգի մասնագետ Աննա Հայրապետյանին՝ Արմավիր համայնքի ղեկավարի անունից կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տասն օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ նոյեմբերի 6
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1335-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 082-Ա որոշումը, Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1179-Ա որոշումը, 2023 թվականի նոյեմբերի 06-ի ՀԱ-09-23 ծածկագրով հողամաս աճուրդով վաճառելու մասին թիվ 9-1 և աճուրդի արդյունքների մասին թիվ 9-2 արձանագրությունները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող, 04-066-0195-0057 ծածկագրով, 0,726 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, գյուղմթերք արտադրելու նպատակով, օտարել 2023 թվականի նոյեմբերի 06-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթող Մարատ Ռոմիկի Հարությունյանին:

2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդային վաճառքի հաղթող Մարատ Ռոմիկի Հարությունյանի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջին կարգի մասնագետ Աննա Հայրապետյանին՝ Արմավիր համայնքի ղեկավարի անունից կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տասն օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ նոյեմբերի 6
Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1336-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանի 2023 թվականի նոյեմբերի 06-ի թիվ 6123 դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանին 2023 թվականի նոյեմբերի 10-ից տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 6 աշխատանքային օրերը (29.12.2022թ. - 29.12.2023թ. ժամանակահատվածի համար):

2.Արթուր Միքաելյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի նոյեմբերի 20-ին:

3.Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանի պարտականությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի վարչական ղեկավար Գրիշա Արշակյանին, իսկ NISSAN X-TRAIL 2.0 մակնիշի 098 CM 61 պետհամարանիշի ծառայողական ավտոմեքենան տրամադրել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Յուրիկ Աբգարյանին:

4.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ արձակուրդային գումարի վճարումը կատարել նոյեմբեր ամսվա աշխատավարձի հետ:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 06
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1337-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 05-ի թիվ 241-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 11 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 34.6 քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է Ա/Ձ Հրանուշ Խաչատրյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Հրանուշ Խաչատրյանի միջև 2008 թվականի մայիսի 16-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 2449/:

Այնուհետև ՀՀ Արմավիր մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 390-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 11 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացվել է մինչև 16.05.2023 թվականը, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Հրանուշ Խաչատրյանի միջև 2018 թվականի նոյեմբերի 20-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 7078/:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Հրանուշ Խաչատրյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Հրանուշ Խաչատրյանի միջև 2008 թվականի մայիսի 16-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով Հրանուշ Խաչատրյանի 2023 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 6106 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Հրանուշ Խաչատրյանի միջև 2008 թվականի մայիսի 16-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 2449/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 16.05.2030 թվականը:

2) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «173000 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «415200 (չորս հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր)» բառերը:

իրավաբանական բաժնին՝ Հրանուշ Խաչատրյանիհետ կնքել համաձայնագիր՝ 2008 թվականի մայիսի՝ 16-ին՝ /սեղ. նո 2449/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. նոյեմբերի 06
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1338

### «ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԵՎ «ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2023ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 11.10.2023թ. թիվ5669 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին հատկացված «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածից պակասեցնել 775,0 հազար դրամ և ավելացնել «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին՝ շերտավարագույրներ ձեռք բերելու համար:

2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշիվներում կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 06
ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1339-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 091-Ա որոշումը, Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1179-Ա որոշումը, 2023 թվականի նոյեմբերի 06-ի ՀԱ-10-23 ծածկագրով հողամասն աճուրդով վաճառելու մասին թիվ 10-1 և աճուրդի արդյունքների մասին թիվ 10-2 արձանագրությունները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ֆ. Նանսենի փ 2/5 հասցեում գտնվող՝ 04-001-0135-0019 ծածկագրով, 0,06113 հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, արտադրամաս կառուցելու նպատակով, օտարել 2023 թվականի նոյեմբերի 06-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթող Աշոտ Արամի Սումարյանին:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդային վաճառքի հաղթող Աշոտ Արամի Սումարյանի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջին կարգի մասնագետ Աննա Հայրապետյանին՝ Արմավիր համայնքի ղեկավարի անունից կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն,որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տասն օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ նոյեմբերի 6
Ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2023 թվականի N 1340-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 116-Ա և 117-Ա որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2023 թվականի դեկտեմբերի 8-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, նախավճարի և քայլի չափերի:

2.Հաստատել աճուրդային կարգով օտարվող հողամասի վերաբերյալ հրապարակային ծանուցման տեքստը, համաձայն թիվ 2 հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելու նպատակով ստեղծված աճուրդային հանձնաժողովին՝ սույն թվականի նոյեմբերի 7-ին հրավիրել հանձնաժողովի նիստ, հաստատել սույն որոշման հավելված 2-ով հաստատված հողամասերի աճուրդային կարգով օտարման պայմանները:

4.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի իրավաբանական բաժնին օրենքով սահմանված կարգով՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումները և ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ֆ. Պետրոսյանը:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ նոյեմբերի6
Ք. Արմավիր

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ղեկավարի 2023 թվականի
նոյեմբերի 06-ի N 1340-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| Հ/Հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), ծածկագիրը | Մակերեսը հեկտար | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը | Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Շենքեր, միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնարկային գինը (դրամ) | Նախավճարի չափը (դրամ) | Քայլի չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Արմավիր համայնքի Ք. Արմավիր Երևանյան փ 51/7 հասցեում գտնվող՝ 04-001-0075-0330 ծածկագրով | 0,0202 | Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության | Առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով | չկա | առկա է | չկա | 2 761 138 | 1 380 569 | 138 057 |
| 2. | Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող՝ 04-043-0407-0003 ծածկագրով | 3,5 | Գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության | Գյուղմթերք արտադրելու նպատակով | չկա | առկա է | չկա | 1 575 000 | 787 500 | 78 750 |

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ղեկավարի 2023 թվականի
նոյեմբերի 06 -ի N 1340-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Արմավիր համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական աճուրդ**

| Լոտի հ/հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը | Մակերեսը հեկտար | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Մեկնար-կային գինը (դրամ) | Նախավճարի չափը (դրամ) | Քայլի չափը (դրամ) | Աճուրդի անցկացման ամիս ամսաթիվը | Աճուրդի անցկացման ժամը | Աճուրդի ծածկագիրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Արմավիր համայնքի Ք. Արմավիր Երևանյան փ 51/7 հասցեում գտնվող՝ 04-001-0075-0330 ծածկագրով | 0,0202 | Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության | Առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով | 2 761 138 | 1 380 569 | 138 057 | 08.12.2023թ. | 11-00 | ՀԱ-11-23 |
| 2. | Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող՝ 04-043-0407-0003 ծածկագրով | 3,5 | Գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության | Գյուղմթերք արտադրելու նպատակով | 1 575 000 | 787 500 | 78 750 | 08.12.2023թ. | 11-30 | ՀԱ-12-23 |

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Ճանապարհներ առկա է: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:
Աճուրդներում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:
Աճուրդներին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Արմավիրի համայնքապետարանի իրավաբանական բաժնում, ք. Արմավիր, Հանրապետության փողոց 32, 3-րդ հարկ:
Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:
Աճուրդները կայանալու են 2023 թվականի դեկտեմբերի 08-ին, հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը, ժամը 18:00-ն:
Աճուրդների պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտեր ներկայացնելու համար դիմել Արմավիրի համայնքապետարան /ք. Արմավիր Հանրապետության 32, 3-րդ հարկ, իրավաբանական բաժին/: Հեռ.՝ /0237/ 0 02 20, 2 28 64:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2023 թվականի N 1341-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Գրիգորյանի 2023 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 6156 դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Գրիգորյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 15 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ից (04.04.2023թ - 04.04.2024թ. ժամանակահատվածի համար):
2.Լիլիթ Գրիգորյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի դեկտեմբերի 1-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ արձակուրդային գումարի վճարումը կատարել նոյեմբեր ամսվա աշխատավարձի հետ:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1342-Ա

**ԷՄՄԱ ՀԱԿՈԲԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ,ԱՐՏԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՋԵՐԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՍԵՎԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՋԵՐԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրև 2023թ. հոկտեմբերի 31/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Էմմա Հակոբի Սամվելյանի 06.11.2023թ. թիվ 6122 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էմմա Հակոբի Սամվելյանին,Արտակ Մամիկոնի Ջերիկյանին և Սևակ Մամիկոնի Ջերիկյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արաքս գյուղ 04-016-024-029 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Արաքս Մ.Խաչունցի փողոց 77 :

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1343-Ա

### ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12-Ն արտահերթ որոշումը և Գագիկ Սաֆարյանի 13.10.2023թ. թիվ 5716 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Սաֆարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան Ա թաղամաս 261 և 262 հասցեներում գտնվող գույքային միավորներին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք, Հ. Բաղրամյան Ա թաղամաս 261:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1344-Ա

### ՎԻԼԵՆ ՋՈՆԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ.դեկտեմբերի 29-ի թիվ2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2016 թվականի հոկտեմբերի 12/ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստի 006-Ա որոշումը Վիլեն Ջոնի Գինոսյանի 03.11.2023թ. թիվ 6098 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վիլեն Ջոնի Գինոսյանին /ծնված 29.04.1991թ./պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0054-0025 կադաստրային ծածկագրով 1200.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 240.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց՝ սեփականության իրավունքով, իսկ 945.0 քմ հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154.44 ՀՀ դրամ, ընդհանուր 145946 /մեկ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր քառասունվեց/ դրամ:

2.Վիլեն Ջոնի Գինոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0054-0025 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ, Ա.Թամանյան փողոց 6-րդ նրբանցք 22:

3.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1345-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՈՒՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, ըստ ժառանգության վկայագրի 10.07.2023թ և Հովհաննես Հովհաննիսյանի 27.10.2023թ. թիվ 5744 դիմումը՝ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0019-0020 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդթվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Արուս Հովհաննիսյանի և Հովհաննես Հովհաննիսյանի պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0019-0020 կադաստրային ծածկագրում գտնվող 1000.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 200.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան սեփականության իրավունքով, իսկ 642,0 քմ

մակերեսով հողամաս օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154.44ՀՀ դրամ, ընդհանուր 99150 / ինսունինը հազար հարյուր հիսուն / ՀՀ դրամ:

2.Վերականգնել Արուս Անդրանիկի Հովհաննիսյանի/ծնված 15.10.1969թ./ և Հովհաննես Անդրանիկի Հովհաննիսյանի /ծնված 21.04.1971թ./սեփականության իրավունքը Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0019-0020 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 1842.0 քմ օրինական հողամասի վրա 1968թ.,1980թ և 1992թ կառուցված 134.1քմ մակերեսով բնակելի տան, 1999թ կառուցված 21.0 քմ մակերեսով օժանդակ շինության, 1992թ կառուցված 12.6 քմ մակերեսով մառանի, 1992թ կառուցված 16.1 քմ մակերեսով նկուղների, 1992թ. կառուցված 8.1 քմ մակերեսով ծածկի, 1992թ. կառուցված 12.5 քմ մակերեսով հավաքնի,1992թ. կառուցված 8.7քմ մակերեսով անասնաշենքի և 1999թ կառուցված 4.6քմ մակերեսով պարիսպի նկատմամբ,իսկ բնակելի տնից բաց պատշգամբը համարել ինքնակամ:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Արուս Հովհաննիսյանին և Արուս Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 04-058-0019-0020 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Հացիկ, 6-րդ փողոց, 27/1:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատականկարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1346-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱԴԱՄ ՓԻԼՈՅԱՆԻՆ, ՇՈԹԱ ՓԻԼՈՅԱՆԻՆ ԵՎ ԴՈՒԽՈ ՓԻԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը,ըստ 17.10.2023թ ժառանգության վկայագրի և Ադամ Փիլոյանի 09.10.2023 թ. թիվ 5619 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ադամ Փիլոյանին, Շոթա Փիլոյանին և Դուխո Փիլոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0007-0008 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան,Ա. Հակոբյան փողոց, 65:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1347-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և Սոֆիկ Ղազարյանի 27.10.2023 թ. թիվ 5960 դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Սոֆիկ Ղազարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0115-0010 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ,30-րդ փողոց, 31:

2.Սույն որոշմամբ ՝գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1348-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱԶՄԻԿ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ, ՍԻՐՎԱՐԴ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ, ՕԼԳԱ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ռազմիկ Միրաքյանի 02.11.2023 թ. թիվ 6080 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռազմիկ Միրաքյանին, Սիրվարդ Ղուկասյանին, Օլգա Միրաքյանին և Արթուր Միրաքյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0057-0001 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Լուկաշին,Ա.Թամանյան փողոց, 5-րդ նրբանցք, 24:
2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1349-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը,ըստ 24.03.2016թ ժառանգության վկայագրի և Արսեն Հովհաննիսյանի 22.09.2023 թ. թիվ 5336 դիմումը '

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Արսեն Հովհաննիսյանին և Արեվիկ Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղում գտնվող 04-062-0022-0032 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Այգեվան,3-րդ փողոց, 54:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 08
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1350-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը,ըստ 29.09.2023թ ժառանգության վկայագրի և Արման Ղազարյանի 05.10.2023 թ. թիվ 5597 դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Արման Ղազարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0260-0184 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մյասնիկյան,Այգեգործական թաղամասի 7-րդ փողոց, 6:
2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. նոյեմբեր 08
ք. Արմավիր